երկու մեծամեծ գետեր կը թափեն սորա մէջ հեռաւոր աշխարհներէ բերած ջրերը, Դոն հիւսիսային կողմէն և Քուպան հարաւէն։ Երկայնութիւն ծովակիս 340 հազարամետր և լայնութիւն 240. յատակը խոր չէ, այն պատճառաւ միայն փոքր նաւեր կարնան վրան շրջել, տափակ յատակներով. շատ տեղ երկու կողմէն ցամաքը կ'երևայ. հանդերձ այնու, մեծ և անտանելի կը լինի ալէկոծութիւնը և լի վտանգաւոր. շատ անգամ 5 և 6 ժամուան ճանապարհը, օրերով չեն կարող կտրել անցնիլ. անհնարին կը լինի ծովային հիւանդութենէ բռնուողներուն վիճակը. զի անհանդարտ կոհակները ոչ մի բոպէ հանգիստ չեն շնորհեր հիւանդաց։ Լատինացիք Palus Meotis կոչել են զնա, արևելեան կողման եղէգնուտներուն պատճառաւ։ Ծովակին ջուրը պղտոր է և դեղնագոյն, աւելի գետի ջուրի յատկութիւն ունի քան ծովու, մանաւանդ գետաբերանաց մօտ տեղուանք. կը խմեն և կը գործածեն բոյսեր ջրելու։

Գենուացիք ԺԲ դարուն տիրած են ծովուս և շրջակայ աշխարհին, և իրենց հետքը ցարդ թողուցել են գեղեցկաշէն աշտարակներով։ Ծովակիս համանուն (Ազով) փոքրիկ քաղաքին մէջ նահատակուած է յայլազգեաց հայկազն Սահակ պատանին, որոյ վկայաբանութիւնը նօտրագիր գրուած գտայ Նախիջևանու ձեռագիր Ցայսմաւուրաց մէկուն ետևը, որ կը պահուի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն պահարանին մէջ։

Թայղանէ կարելի էր փոքր շոգենաւով Դոն գետին վրայէն գնալ 'ի Ռոստով, այլ որովհետև կէսօրէն վերջը անմիջապէս ժամը երեքին երկաթուղւոյ ընթացք մի պիտի մեկնէր 'ի Թայղանէ Ռոստով,